# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 20 Ապրիլի 2012թ.

«Անդրանիկ» Հրատարակչություն ՍՊԸ-ը, այսուհետ՝ «Կիրառող», ի դեմս տնօրեն Մ. Բարսեղյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Իմ առաջին գիրքը» ուսումնաժամանակ ձեռնարկի հեղինակ ՀՀ քաղաքացի Միհրան Բարսեղյանը, այսուհետ՝ «Հեղինակ» , մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագի առարկան

1.1 Հեղինակը Կիրառողին է փոխանցում «Իմ առաջին գիրքը» ուսումնաժամանակ ձեռնարկի, այսուհետ «Ստեղծագործություն», օգտագործման բացառիկ իրավունքը հետևյալ ձևերով՝

1.1.1. Ստեղծագործության վերարտադրում (վերարտադրության իրավունք),

1.1.2. Ստեղծագործության նմուշների տարածում ցանկացած ձևով՝ վաճառք, վարձակալության հանձնում և այլն (տարածման իրավունք),

1.1.3. Տարածման նպատակով Ստեղծագործության նմուշների արտահանում (արտահանման իրավունք),

1.1.4 Ստեղծագործության հրապարակային ցուցադրում (հրապարակային ցուցադրման իրավունք),

1.1.5. Ստեղծագործության հրապարակային կատարում (հրապարակային կատարման իրավունք),

1.1.6 Ստեղծագործության հաղորդում (ներառյալ ցուցադրումը, կատարումը կամ եթերով հեռարձակումը)՝ համընդհանուր տեղեկացման համար (եթերով հեռարձակման իրավունք),

1.1.7 Համացանցային հեռարձակում (Ինտերնետային կապի միջոցով հեռարձակման իրավունք),

1.1.8 Ստեղծագործության թարգմանում (թարգմանության իրավունք),

1.1.9 Ստեղծագործության ձևավորում կամ այլ կերպ վերամշակում (վերամշակման իրավունք):

2. Իրավունքի հանձման ժամկետը

2. Իրավունքի հանձման ժամկետը

Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները Հեղինակի կողմից փոխանցվում են Կիրառողին անժամկետ՝ սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից սկսած:

3. Իրավունքների կիրառման տարածքը

Սույն պայմանագրի համաձայն, Հեղինակի կողմից Կիրառողին հանձնված իրավունքները օգտագործման տարածքային սահմանափակում չունեն:

4. Գինը և վճարման կարգը

4.1 Հեղինակը սույն պայամանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով Ստեղծագործության օգտագործման իրավունքը Կիրառողին է տրամադրում անհատույց հիմունքներով:

5. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

| ՀԵՂԻՆԱԿ | ԿԻՐԱՌՈՂ |
|---|---|
| «Անդրանիկ» Հրատարակչություն ՍՊԸ | Միհրան Բարսեղյան |
| Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 12/3 | Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 12/28 |
| ՀՎՀՀ՝ 00111946 | Անձնագիր՝ BA1643335, տրված՝ 14.10.2014թ. 004-ի կողմից |
| Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ | Սոց. Քարտ՝ 3807700250 |
| Հ/Հ՝ 15700-23745670100 | |
| Տնօրեն՝ Մ. Բարսեղյան | |

Կ.Տ. _____ _____

(ստորագրություն) (ստորագրություն)